



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան



«21» 02 2025թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 037 - 25

Նախաձեռնող՝

«Վիշկա» ՍՊԸ

ք. Երևան, Գ. Նժդեհի փողոց 15/1

Գործունեությունը՝

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջան,  
Գ. Նժդեհի փողոց 15/1 հասցեում կառուցվող շենքի  
վերկառուցման և հարկերի ավելացման

ք. Երևան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 037 - 25

«21» փետրվարի 2025թ.

**Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Գ.Նժդեհի փողոց 15/1 հասցեում կառուցվող շենքի վերակառուցման և հարկերի ավելացման**

Նախաձեռնող՝	«Վիշկա» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակ՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան Գ.Նժդեհի փողոց 15/1

**Ներածական մաս.** «Վիշկա» ՍՊ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսում էրևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Գ.Նժդեհի փողոց 15/1 հասցեում իրականացնել կառուցվող շենքի վերակառուցման և հարկերի ավելացման աշխատանքեր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հաշվետվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ № 14062023-01-0388, /ծածկագիրը՝ 01-011-0034-0003/, Երևան համայնքի կողմից 27.16.2024 թ.-ին № 01/50-01-413 տրված նախագծման թույլտվությունը:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

**Նկարագրական մաս.** Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում էրևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Գարեգին Նժդեհի փողոց հ.15/1 հողամաս



հասցեում: Շենքը տեղակայված է Գարեգին Նժդեհ, Մանանդյան և Մանթաշյան փողոցների միջև: Համաձայն ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների եզրակացության՝ տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասեր մինչև 25 մ խորություններում չեն հայտնաբերվել:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են հայցվող տարածքում: Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից լուծումներով բնակելի շենք: Շենքը կազմված է 2 հատվածամասերից, որոնք միմյանցից բաժանված են սեյսմիկ կարանով: Շենքը ունի 39.7 մ x 32.4 մ արտաքին առանցքաչափեր: Առավելագույն բարձրությունը կազմում է 45,5 մ: Որպես  $\pm 0.000$  նիշ ընդունված է առաջին հարկի հարդարված հատակի նիշը, որը համապատասխանում է 926.881 բացարձակ նիշին: Նախատեսված է 2 ստորգետնյա, 12 վերգետնյա և 1 տեխնիկական հարկ: Մուտքը դեպքի ստորգետնյա հարկեր նախատեսված է թեքուղիներով: Աստիճանավանդակների դռները հակահրդեհային են: Ստորգետնյա հարկերում նախատեսված են ավտոկայանատեղիներ, ինժեներա-տեխնիկական նշանակության սենքեր: 1-ին վերգետնյա հարկում նախատեսված են հասարակական նշանակության տարածքներ: 2-րդից մինչև 12-րդ հարկերում նախատեսված են բնակարաններ: Բոլոր բնակարանների համար նախատեսված է պատշգամբ: Բնակարանների ջեռուցումը և տաք ջրի ապահովումը նախատեսված է իրականացնել բնակարաններում տեղադրվող գազի երկկոնտուրանի տուրբո կաթսաների միջոցով: Շենքի տանիքը հարթ է և ունի կազմակերպված ջրահեռացում, որը նախատեսվում է իրականացնել շենքի ներսի կողմից՝ ջրահեռացման խողովակների միջոցով:

Աստիճանավանդակի դռները հրակայուն են և ինքնափակվող: Օդորակիչների արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել պատշգամբներում: Շենքի կանաչ գոտիներում նախատեսվում են իրականացնել պասիվ (գրուցարան) և ակտիվ (խաղահրապարակ) զոնաներ: Նախատեսված են բացօթյա ավտոկայանատեղիներ, ինչպես նաև էլեկրական մեքենաների համար լիցքավորման կայան: Համաձայն փորձաքնության դրական եզրակացության մասնաշենքերի սեյսմիկ հաշվարկները կատարվել են 2 ստորգետնյա և 12 վերգետնյա հարկերով, սակայն նախագիծը ներկայացվել է համաձայնեցման 2 ստորգետնյա և 9 վերգետնյա հարկերով: Հարկ է նշել, որ նախագծում ներկայացված է ինչպես 12, այնպես էլ 9 հարկերով մասնաշենքերից ստացված արդյունքները: Էսքիզային նախագծով նախատեսվում է կրկնվող հարկերն ավելացնել ևս 3 հարկով: Ստորգետնյա ավտոկայանատեղիի 1-ին հարկի մակերեսն ընդլայնել 601.6 քմ մակերեսով՝ ավելացնելով 20 ավտոկայանատեղի:

### **Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝**

հողի մակերես՝ 3197 քմ,

կառուցապատման մակերես 1186.5 քմ - 37.1 %,

անջրանցիկ մակերես՝ 619.5 քմ - 19.4 %,

կանաչապատում՝ 1391 քմ - 43,5 %,

ընդհանուր շինարարական մակերես հարկերով 18162 քմ,

ստորգետնյա ավտոկայանատեղի մակերես՝ 1 հարկ 2118,9 քմ,

ստորգետնյա ավտոկայանատեղի մակերես՝ 2 հարկ 1480.1 քմ



Շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի: Ջրամատակարարումը նախատեսվում է Մանթաշյան փողոցով անցնող D=300 մմ ջրատարից՝ ջրահեռացումը Մանանյան փողոցով անցնող D=600 մմ կոյուղատարից: Շինարարության փուլում ջրցանման համար անհրաժեշտ ջուրը կբերվի կամ պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով կամ կղիմեն լիազոր մարմին՝ համապատասխան ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը իրականացվելու է 250 Կվա ծախսով նախատեսվող ենթակայանի 0,4 Կվ վահանից: Նախատեսվող ենթակայանի համար կհատկացվի 66 քմ տարածք:

Գազամատակարարումը՝ 320 խմ/ժամ նախատեսվող ծախսով, կիրականացվի Երևան-2 ԳԲԿ-ն սնող Dպ-700 կողմնատար գազատարից: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության համաձայնեցմանը: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 1391 քմ: Տարածքում նախատեսվում է տնկել 4 հատ գնդաձև ակացիա, 2 հատ բարելոնական ուռենի, 2 հատ թույա, 2 հատ գնդաձև թույա, 4 հատ յասաման, 10 հատ վարդեր գետնատարած, 30 հատ բոցենի, 24 հատ վաղենակ, սոխածաղիկ 300 հատ: Կպահպանվեն և կանաչապատման նախագծում կներգրավվեն նաև տարածքում առկա 3 եղևնիները և մնացած ծառերը: Կանաչապատ տարածքների ոռոգման ներքին ցանցը նախատեսվում է կաթիլային, որն իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն քանդման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ: Հողային ռեսուրսների պահպանության համար շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի վլացում շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար: Անձրևների և ձնհալի ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն պարզարան: Պարզարանները տեղադրվելու են շինարարական հրապարակին կից, ցածրադիր հատվածներում, որոնք իրենցից ներկայացնում են պլաստմասե 2 հատ 50 խմ ծավալով տարողություններ, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով՝ որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 600 քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում



մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում՝

- կառաջանա շինարարական աղբ, որն ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր,
- կենցաղային չտեսակավորված աղբ, որը կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- փորման աշխատանքների ընթացքում առաջացած մնացորդային գրունտ, որը կտեղափոխվի ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով և այլն:

Դպրոցի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում,
- շինարարական աղբի կանոնավոր հեռացում թույլատրված աղբավայր, ինչպես նաև շինհրապարակում կենցաղային աղբի համար նախատեսված աղբամանների տեղադրում,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերին համապատասխան,
- շինարարական մեքենաների սահմանափակ տեղաշարժ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ,
- աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացում թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին՝ մինչև ժամը 18:00,
- մեքենաների անիվների լվացման և մաքրման միջոցառումներ (կոպիճե մակերեսներ)՝ հրապարակից ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով,
- շինարարական նյութերի ձեռք բերում լիցենզավորված մատակարարներից, ներառյալ՝ բետոնաշաղախը՝ մոտակա հանգույցներից,
- վառելիքի և նավթանման նյութերի պահումը կիրականացվի բետոնե, ավազե հիմքերի կամ մետաղական անթափանց տակդիրների վրա,
- մեքենասարքավորումների տեխնիկական սպասարկումը կիրականացվի մասնագիտացված կենտրոններում,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ,
- կապահովվեն առողջության և աշխատանքի անվտանգության ապահովման միջոցառումներ, ներառյալ՝ բանվորական կազմին սեզոնային արտահագուստի, անձնական պաշտպանիչ միջոցների տրամադրում:



**Պատճառաբանական մաս.** գնահատման հաշվետվության և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լսումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Երևանի քաղաքապետարանից ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

### **Փորձաքննական պահանջներ**

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:
3. Կանաչապատումն անհրաժեշտ է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:



## ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Վիշկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի, Գ.Նժդեհի փողոց 15/1 հասցեում կառուցվող շենքի վերակառուցման և հարկերի ավելացման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Հովակիմ Ֆրունզիկյան